

Թիւ 24781  
Փետրուար 19, 1976

Հոգեշնորհ  
Տ. Եղիշէ Ժ. Վրդ. Կիզիրեան  
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Գէյմպրիճ.

Սիրելի Հայր Եղիշէ,

Ստացած ենք Փետրուար 18, 1976 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ Փետրուար 9ին գումարուած համայնքի ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԸԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Կրեկլրի Թաշճեան  
Ճէրբլտ Օտապաշեան  
Ռապրթ Բրուտեան  
Սարգիս Պօղոսեան Կրտսեր  
Օր. Անիթա Հեաիցեան